# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

## *07.06.2021թ. կնքված N « ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին*

«09» 02 2022թ.

ք.Երևան

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Պատվիրատու/, մի կողմից, «Դավթյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Դավթյանի,որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից /այսուհետ՝ Կողմեր/, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածով և 07.06.2021թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-21/7» գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 և 7.15 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1. Հաստատել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման նպատակով 2022 թվականի համար նախատեսված ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը /կցվում է/:

1.2. Սահմանել, որ Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 03.01.2022թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև համաձայնագիր կնքելը կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումը իրականացվում է սույն համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

### 2. Այլ պայմաններ

2.1. 07.06.2021թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-21/7 » ծածկագրով ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | «Դավթյան» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ. Ադամյան 1 | ՀՀ, Տավուշի մարզ, գ. Սևքար 19փ., 1 նրբ. Տուն 2 |
| ՀՎՀՀ՝ 02629081 | «Արարատբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011018539 | Հ/Հ 1510029308740100 |
| ՖՆ գործառնական վարչություն | ՀՎՀՀ 07618736 |
| ՖՆ գլխավոր քարտուղար | Տնօրեն |
| ------------------------ Վ. Հարությունյան | ------------------------ Ա. Դավթյան |
| /ստորագրություն/ | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |

Հավելված
07.06.2021թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«09» 02 2022թ. կնքված համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| ծառայություններ | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 72261160/6 | Ծրագրային Ապահովման Սպասարկմա ծառայություններ | | 666.666 | 666.666 | 1333333 | 1333333 | 1333333 | 2000000 | 2000000 | 2000000 | 2666666 | 2666666 | 2666666 | 2666666 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011018539
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար

________________ Վ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Դավթյան» ՍՊԸ
ՀՀ, Տավուշի մարզ, գ. Սևքար 19փ., 1 նրբ. Տուն 2
«Արարատբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1510029308740100
ՀՎՀՀ 07618736
Տնօրեն՝

________________ Ա. Դավթյան
(ստորագրություն)
Կ.Տ.